U.S. DEPARTMENT of STATE

TRAVEL.STATE.GOV BUREAU OF CONSULAR AFFAIRS

2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՄՆ ՆԵՐԳԱՂԹԻ ՎԻԶԱՅԻ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ (DV-2014)

Կոնգրեսի որոշման համաձայն իրականացվող ներգաղթային վիզայի ամենամյա վիճակախաղը կազմակերպվում է ԱՄՆ Պետքարտուղարության կողմից՝ Ներգաղթի և քաղաքացիության մասին օրենքի 203(գ) հոդվածով նախանշվող պայմանների համաձայն: Այս օրենքով նախատեսվում է ներգաղթողների նոր տեսակ, որ հայտնի է, որպես «ներգաղթողներ բազմազանության ապահովման համար» և ներգաղթի վիզաներ են տրամադրվում ԱՄՆ ներգաղթի ցածր ցուցանիշներ ունեցող երկրների քաղաքացիներին: 2014 ֆինանսաբյուջետային տարվա համար նախատեսվում է շնորհել մշտական բնակության 50.000 վիզա: :

Ամենամյա այս ծրագրի շրջանակում մշտական բնակության վիզա ստանալու համար անհրաժեշտ է բավարարել մի շարք պարզ ու հստակ չափանիշների: Ընտրությունը կատարվում է վիճակախաղի միջոցով, որի ժամանակ համակարգիչը պատահական ընտրանքի միջոցով որոշում է հաղթողներին, որոնք իրավունք են ստանում ներգաղթային վիզայի դիմում ներկայացնել: Այս վիզաները բաշխվում են վեց աշխարհագրական տարածքներում, որտեղ որևէ երկիր իրավասու չէ ստանալ տվյալ տարվա համար խաղարկվող վիզաների 7 տոկոսից ավելին: Վիզաների գերակշիռ մասը գնում է այն երկրներին, որոնք ունեն ԱՄՆ ներգաղթի ցածր ցուցանիշներ: Իսկ այն երկրների քաղաքացիները, որտեղից վերջին 5 տարիների ընթացքում ներգաղթած անձանց թիվը գերազանցում է 50.000-ը, իրավունք չունեն մասնակցել այս ծրագրին: Ոչ մի երկիր իրավասու չէ ստանալ տվյալ տարվա համար խաղարկվող վիզաների 7 տոկոսից ավելին:

Հետևյալ երկրների[1] քաղաքացիները 2014թ. խաղարկությանը չեն կարող մասնակցել, քանի որ վերջին 5 տարիների ընթացքում այդ երկրներից ԱՄՆ ներգաղթողների թիվը գերազանցում է 50.000-ը.

ԲԱՆԳԼԱԴԵՇ, ԲՐԱԶԻԼԻԱ, ԴՈՄԻՆԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷԼ ՍԱԼՎԱԴՈՐ, ԷԿՎԱԴՈՐ, ԿԱՆԱԴԱ, ԿՈԼՈՒՄԲԻԱ, ՀԱԻԹԻ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱ, ՀՆԴԿԱՍՏԱՆ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ (բացի Հյուսիսային Իռլանդիայից) իր հպատակ տարածքներով, ՄԵՔՍԻԿԱ, ՉԻՆԱՍՏԱՆ (ցամաքային), ՊԱԿԻՍՏԱՆ, ՊԵՐՈՒ, ՋԱՄԱՅԿԱ, ՎԻԵՏՆԱՄ, ՖԻԼԻՊԻՆՆԵՐ:

Հոնկոնգ և Մակաու հատուկ վարչական շրջաններում և Թայվանում ծնված մարդիկ կարող են մասնակցել ծրագրին:

Այս տարվա խաղարկությանը մասնակցելու իրավասու երկրների շարքում տեղ գտած փոփոխություններն են. Գվատեմալայի բնակիչներն իրավասու են մասնակցել DV-2014-ին:

Պետքարտուղարությունը 2005թ. ներդրել է դիմումների ներկայացման էլեկտրոնային համակարգ՝ գործընթացն առավել արդյունավետ ու ապահով դարձնելու համար: Կիրառվող տեխնոլոգիաները թույլ են տալիս հայտնաբերել անօրինական միգրացիային միտված կեղծիքները և այն դեպքերը, երբ ներկայացվում են մեկից ավելի դիմումներ մեկ հոգու անունից:

ԳՐԱՆՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

DV-2014 վիճակախաղի մասնակցության դիմումները պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով, սկսած 2012թ. հոկտեմբերի 2-ից, երեքշաբթի (ստանդարտ արևելյան ժամանակով 12:00-ից (Գրիվնիչ -4)) մինչև շաբաթ, 2012թ. նոյեմբերի 3-ը (ստանդարտ արևելյան ժամանակով 12:00 (Գրիվնիչ -4)): Մասնակցության համար պետք է այցելել www.dvlottery.state.gov կայքը ու գրանցման համար նախատեսված ժամանակահատվածում լրացնել

[1]“ Երկիր” բառն այս փաստաթղթում վերաբերում է երկրներին, տնտեսական և վարչատարածքային միավորներին, որոնց հստակ ցանկը ներկայացվում է սույն հրահանգների վերջում:

օնլայն/առցանց դիմումը: Թղթային կրիչով դիմումներ չեն ընդունվում: Մասնակիցներին խորհուրդ ենք տալիս գրանցումը չթողնել վերջին շաբաթվան: Մեծ պահանջարկը կարող է կայքի աշխատանքի վրա անդրադառնալ: 2012թ. նոյեմբերի 3-ից հետո այլևս դիմումներ չեն ընդունվի:

ՈՎՔԵ՞Ր ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ

- **Մասնակիցը պետք է լինի թվարկված երկրներից մեկի բնիկ**. երկրների ցանկի համար տես՝ «Երկրներ, որոնց բնիկներն իրավասու են մասնակցել ծրագրին»:

  Այնպիսի երկրի բնիկ, որի բնակիչները կարող են դիմել ծրագրին. բնիկ ասելիս սովորաբար նկատի է առնվում այն երկիրը, որտեղ ծնվել է մասնակիցը: Այս պայմանին բավարարելու համար կա ևս երկու տարբերակ. առաջին՝ մասնակիցը ամուսնացած է ծրագրին մասնակցելու իրավասություն ունեցող երկրի բնիկի հետ, սակայն այս դեպքում ամուսինները պետք է միաժամանակ դիմեն վիզայի համար և միասին մուտք գործեն ԱՄՆ, և երկրորդ՝ մասնակիցը ծնվել է այնպիսի երկրում, որտեղ ծնվածն այս տարի չի կարող մասնակցել ծրագրին, սակայն նրա ծնողներից և ոչ մեկը չեն ծնվել այդ երկրում կամ նրա ծնվելու ժամանակ չեն եղել այդ երկրի մշտական բնակիչ, ապա նա կարող է ծնողներից մեկի ծննդավայրի հիման վրա դիմել, եթե դա այնպիսի երկիր է, որի բնիկը իրավասու է մասնակցել DV-2013 ծրագրին:

- **Մասնակիցը պետք է համապատասխանի ծրագրի կողմից առաջադրվող կրթական կամ աշխատանքային փորձի պահանջներին:** Մասնակիցը կամ պետք է ունենա միջնակարգ կրթություն, որը համապատասխանում է ԱՄՆ-ում դպրոցական 12-ամյա կրթությանը, կամ վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երկու տարի աշխատած լինի մի այնպիսի մասնագիտությամբ, որի համար պահանջվում է նվազագույնը երկու տարվա ուսուցում կամ երկու տարվա աշխատանքային փորձ: Աշխատանքային փորձի համապատասխանությունը որոշելիս կօգտագործվի ԱՄՆ աշխատանքի և զբաղվածության նախարարության O*Net Online տվյալների օնլայն/առցանց բազան: Աշխատանքային փորձի հետ կապված մանրամասներ կարող եք գտնել **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ** շարքի 13-րդ պատասխանում:

  Եթե ինչ-որ մեկն այս երկու պայմաններին չի համապատասխանում, ապա նա ՉՊԵՏՔ է դիմում ներկայացնի:

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- **Պետքարտուղարությունը կընդունի միայն ամբողջությամբ լրացված Ներգաղթային վիզայի վիճակախաղի մասնակցության էլեկտրոնային դիմումները, որոնք կներկայացվեն www.dvlottery.state.gov կայքից գրանցման համար սահմանված ժամկետներում,** այն է՝ երեքշաբթի, 2012թ. հոկտեմբերի 2-ից (ստանդարտ արևելյան ժամանակով 12:00-ից (Գրիվնիչ -4)) մինչև շաբաթ, 2012թ. նոյեմբերի 3-ը (ստանդարտ արևելյան ժամանակով 12:00 (Գրիվնիչ -4)):
  - Եթե մի հոգու անունով ստացվում է ՄԵԿԻՑ ավելի դիմում, ապա բոլոր դիմումները չեղյալ են համարվում՝ անկախ այն հանգամանքից, թե ով է դիմումը ներկայացրել: Դիմել ցանկացողները կարող են իրենք պատրաստել և ներկայացնել դիմումը, կամ էլ խնդրել, որ մեկ այլ ոք դա անի իրենց համար: Գրանցման համար ՈՉ ՄԻ ՎՃԱՐՈՒՄ չի պահանջվում:
  - Հրահանգների համաձայն մասնակցության դիմումը լրացնելուց հետո էկրանին կհայտնվի դիմումի ստացումը հաստատող ծանուցում, որտեղ կնշվի մասնակցի անունը ու եզակի նույնականացման համարը: Սա մասնակիցը պետք է տպի և պահի: **2013թ. մայիսի 1-ից այս նույնականացման համարի ու Ձեր անձնական տվյալների մուտքագրման միջոցով կկարողանաք www.dvlottery.state.gov կայքում ստուգել Ձեր DV-2014 դիմումի կարգավիճակը՝ Entrant Status Check դաշտում: Դիմումի կարգավիճակի ստուգումը միակ ուղին է, որով դուք կկարողանաք իմանալ DV-2014 վիճակախաղում շահելու մասին և միայն այդ կերպ դուք կստանաք հրահանգներ հետագա քայլերի, ներգաղթային վիզայի հարցազրույցի նշանակման հետ կապված: Ուստի նույնականացման համարի պահպանումը խիստ կարևոր է:**

- Թղթային կրիչով ներկայացվող դիմումները չեն ընդունվում: DV-2014-ին մասնակցելու միակ եղանակը էլեկտրոնային դիմումի ներկայացումն է:

- **Դիմումում պետք է նշեք Ձեր կնոջը/ամուսնուն, 21 տարին չլրացած ու չամուսնացած կենդանի երեխաներին**, անկախ այն հանգամանքից նրանք Ձեզ հետ ապրում են, թե ոչ, կամ էլ պատրաստվում են ներգաղթել Ձեզ հետ ԱՄՆ կամ ոչ, բացառությամբ այն դեպքի, երբ նրանք արդեն ԱՄՆ քաղաքացի են կամ ԱՄՆ մշտական բնակչի կարգավիճակ ունեն: Եթե Ձեր կինը/ամուսինը կամ երեխաները արդեն իսկ հանդիսանում են, ապա նրանք վիզայի կարիք չունեն: Այս հրահանգի չկատարումը կարող է ձեր դիմումը չընդունելու պատճառ հանդիսանալ:

- **Խիստ կարևոր է պահանջվող լուսանկարների կցումը դիմումին:** Դիմումը չի ընդունվի, եթե պահանջվող բոլոր լուսանկարները կցված չեն: Դիմումի հետ միասին էլեկտրոնային եղանակով պետք է ուղարկվեն
  - դիմողի,
  - նրա ամուսնու/կնոջ և
  - 21 տարեկանից ցածր բոլոր կենդանի երեխաների (հարազատ երեխաներ, ինչպես նաև օրինականորեն որդեգրված կամ խորթ երեխաներ) թարմ լուսանկարներ: Երեխաների լուսանկարները պետք է լինեն նույնիսկ այն դեպքում, երբ երեխան չի բնակվում դիմողի հետ միասին, կամ էլ չի պատրաստվում նրա հետ ներգաղթել Միացյալ Նահանգներ այս ծրագրի շրջանակում: Արդեն իսկ ԱՄՆ քաղաքացի հանդիսացող կամ ԱՄՆ-ում մշտապես բնակվելու իրավունք ունեցող կնոջ/ամուսնու և երեխաների լուսանկարները կցելու անհրաժեշտություն չկա:

Ամուսնու/կնոջ և նշված բոլոր երեխաների համար լուսանկարներ չկցելու դեպքում Ձեր դիմումը կհամարվի թերի: Համակարգը դիմումը չի ընդունի ու հարկ կլինի նորից այն լրացնել: Խմբային կամ ընտանեկան նկարներր չեն ընդունվում. ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար պետք է ներկայացվի առանձին լուսանկար:

Ոչ ճիշտ լուսանկարների ներմուծումը համակարգ կհանգեցնի հիմնական դիմողի որակազրկմանը ու այդ գործի շրջանակում քննվող ներգաղթային վիզաների մերժմանը՝ վիճակախաղում շահելուց հետո: Մասնակցության դիմումը չի դիտարկվի կամ վիզան կմերժվի, եթե կցված լուսանկարները բավականաչափ թարմ չեն, փոփոխված են կամ էլ ստորև ներկայացվող պահանջներին չեն համապատասխանում:

Թվային լուսանկարին վերաբերող պահանջներ

Օնլայն/առցանց դիմումի հետ միասին պետք է ներկայացվի Ձեր, Ձեր կնոջ/ամուսնու և երեխաների թվային լուսանկարը: Թվային լուսանկարը կարելի է ստանալ հետևյալ եղանակներով. կամ լուսանկարում թվային լուսանկարչական ապարատով, կամ սովորական լուսանկարի տեսաներածում՝ թվային տեսաներածիչի (սկաների) միջոցով: Լուսանկարի ֆայլը պետք է համապատասխանի որոշակի կոմպոզիցիոն և տեխնիկական բնութագրերի:Վիճակախաղի մասնակցության կայքում կա լուսանկարների համապատասխանությունը ստուգելու հնարավորություն: Կայքում կարող եք գտնել հավելյալ տեխնիկական պարզաբանումներ լուսանկարի կոմպոզիցիոն բնութագրի վերաբերյալ, ինչպես նաև ընդունելի ու ոչ ընդունելի լուսանկարների օրինակներ:

Կոմպոզիցիոն բնութագիր. Եթե ներկայացվող թվային լուսանկարը չի համապատասխանում հետևյալ կոմպոզիցիոն բնութագրին, ապա դիմումը չի դիտարկվի.

Գլխի դիրքը

- Լուսանկարվողը պետք է նայի ուղիղ ֆոտոխցիկին,
- լուսանկարվողի գլուխը չպետք է լինի բարձրացված, իջեցված, կամ էլ որևէ կողմ թեքված,
- լուսանկարվողի գլխի բարձրությունը կամ դիմային հատվածը (չափվում է գլխի վերնամասից՝ մազերը ներառյալ մինչև դնչի ծայրը) պետք է զբաղեցնի լուսանկարի ընդհանուր բարձրության 50-69%-ը: Աչքերի բարձրությունը (պատկերի ստորին մասից մինչև աչքերի մակարդակը) պետք է լինի պատկերի բարձրության 56-

69%-ի սահմաններում:

Գլխի չափը թվային լուսանկարում



Լուսանկարի օրինակներ կարող եք գտնել այստեղ՝ Photo Requirements

Ֆոնը

- Լուսանկարը պետք է լինի բաց գույնի չեզոք ֆոնի վրա:
- Մուգ կամ դեկորատիվ ֆոնի վրա կատարված լուսանկարները չեն ընդունվում:

Ֆոկուսը

- Լուսանկարը պետք է ֆոկուսի մեջ լինի:

Դեկորացիաներ

- Լուսանկարը չի ընդունվում, եթե լուսանկարվողը կրում է արևային ակնոցներ կամ այլ պարագաներ, որոնք ծածկում են դեմքի որոշ մասեր:

Գլխարկներ կամ գլխանոցներ

- Գլխաշորով կամ գլխարկով նկարներ դիմորդներից ընդունվում են միայն այն դեպքում, եթե դրանց կրելը պայմանավորված է տվյալ անձի կրոնական պատկանելությամբ, սակայն կրկին պետք է ապահովել, որ դեմքը լուսանկարում արտացոլվի ամբողջականորեն: Անընդունելի են ոչ կրոնական բնույթի գլխարկներով կամ գլխանոցներով լուսանկարները: Չեն ընդունվում զինվորականների, ավիացիայի աշխատակիցների և գլխարկով համազգեստ կրող այլ անձանց գլխարկով լուսանկարները:

Պահանջվում են 24-բիթ գունավոր լուսանկարներ: Լուսանկարների ֆայլը պետք է համակարգչում բեռնել ֆոտոխցիկից կամ տեսաներածել (սկանավորել) այն: Սկաներ օգտագործելու դեպքում ընտրեք True Color կամ 24-bit color տարբերակները: Սկանավորման պահանջների վերաբերյալ մանրամասները ներկայացվում են ստորև:

Տեխնիկական բնութագիր

Ներկայացված թվային լուսանկարը պետք է ունենա հետևյալ տեխնիկական բնութագիրը, այլապես դիմումի ընդունումն անմիջապես կմերժվի և այդ մասին էկրանին ծանուցում կհայտնվի.

Լուսանկարում թվային լուսանկարչական ապարատով. Թվային լուսանկարման դեպքում պետք է ապահովվի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Պատկերի ֆայլի ֆորմատը՝ JPEG

Պատկերի ֆայլի չափը ՝	առավելագույնը 240 կիլոբայթ
Պատկերի ռեզոլյուցիան՝	600x600 պիքսել, նկարի կողմերը հավասարաչափ (լայնությունը և երկարությունը հավասար)
Պատկերի գունային խորությունը ՝	լուսանկարը պետք է լինի գունավոր (24 բիթ յուրաքանչյուր պիքսելում). 24 բիթ սև ու սպիտակ կամ 8 բիթ պատկերները չեն ընդունվում

Առկա լուսանկարի տեսաներածում/սկանավորում. նախքան տեսաներածումը լուսանկարը պետք է համապատասխանի հետևյալ վերը նկարագրված կոմպոզիցիոն բնութագրին: Եթե լուսանկարը գունային ու կոմպոզիցիոն բնութագրին համապատասխանում է, ապա այն կարող եք տեսաներածել՝ հետևյալ տեխնիկական բնութագրի համաձայն.

Տեսաներածման ռեզոլյուցիան՝	300 կետ մեկ մատնաչափի վրա (dpi)
Պատկերի ֆայլի ֆորմատը ՝	JPEG
Պատկերի ֆայլի չափը ՝	առավելագույնը 240 կիլոբայթ
Պատկերի ռեզոլյուցիան՝	600x600 պիքսել
Պատկերի գունային խորությունը ՝	24 բիթ գունավոր (ուշադրություն. սև ու սպիտակ, մոնոխրոմային կամ գրեյսքեյլ պատկերները չեն ընդունվում:)

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներգաղթային վիզայի ամենամյա վիճակախաղի մասնակիցների գրանցումն իրականացվում է միայն մեկ եղանակով. դիմել ցանկացողները պետք է լրացնեն www.dvlottery.state.gov ինտերնետային էջում տեղադրված DS 5501 դիմումը: **Դիմումը չի ընդունվում, եթե այն ամբողջությամբ լրացված չի: Դիմումում լրացվում են հետևյալ տվյալները.**

Ծանոթություն. պետքարտուղարությունը խորհուրդ է տալիս ծրագրի համար դիմողներին դիմումները անձամբ լրացնել և չդիմել "խորհրդատուների", "միջնորդների" կամ այլ անձանց, ովքեր առաջարկում են դիմումները լրացնել Ձեր փոխարեն: Եթե դուք օգտվում եք մեկ այլ անձի (որևէ երրորդ կողմի) ծառայություններից, ապա դիմումը լրացնելիս պետք է ներկա գտնվեք, որպեսզի վերցնեք և պահեք դիմումի ընդունումն հաստատող ծանուցումը և նույնականացման համարը: Շատ դեպքերում միջնորդները կարող են նույնականացման համարը Ձեզ չտրամադրել հետագայում շահման մասին տեղեկացնելիս զումար կամ ծառայություն պահանջելու նպատակով, սակայն Ձեր տրամադրության տակ ունենալով նույնականացման համարով ծանուցումը դուք ինքներդ ուղղակիորեն կարող եք ստանալ այդ ինֆորմացիան:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. DV-2014-ի առցանց գրանցման ժամանակ տրված նույնականացման համարը Ձեզ անհրաժեշտ է, որպեսզի հետագայում՝ 2013թ. մայիսի 1-ից սկսած, մուտք գործեք վիճակախաղի կայք (www.dvlottery.state.gov) և այնտեղ զետեղված Entrant Status Check (դիմումի կարգավիճակի ստուգում) բաժնում ստուգեք արդյո՞ք շահել եք, թե ոչ: Դիմումի կարգավիճակի ստուգումը միակ ուղին է, որով դուք կկարողանաք իմանալ DV-2014 վիճակախաղում շահելու մասին և միայն այդ կերպ դուք կստանաք հրահանգներ հետագա քայլերի, ներգաղթային վիզայի հարցազրույցի վերաբերյալ: Եթե նույնականացման համարը չունքեք, ապա դուք չեք կարողանա ստուգել Ձեր դիմումի կարգավիճակը:

1. **Ազգանուն, անուն, հայրանուն –** գրեք ճիշտ այնպես, ինչպես գրված է Ձեր անձնագրում
2. **Ծննդյան օրը** - օր, ամիս, տարի
3. **Սեռը** - արական կամ իգական
4. **Ծննդավայր** - քաղաք/գյուղ
5. **Ծննդավայր** - երկիր, ընդ որում, պետք է օգտագործել ծննդյան երկրի պաշտոնական անվանումը դիմումը

լրացնելու պահին

6. **Երկիրը, որտեղից իրավասու է ներկայացնել դիմում -** սովորաբար սա նույնն է, ինչ դիմողի ծննդավայր երկիրը: Պարտադիր չէ, որ դա լինի նույն երկիրը, որտեղ դուք ապրում եք: Եթե դուք ծնվել եք մի այնպիսի երկրում, որտեղից վիճակախաղի մասնակցության դիմումներ չեն ընդունվում, ապա դիտարկեք այս հրահանգները ՝ պարզելու թե իրավասու եք արդյոք դիմել այլ հիմունքներով: Մանրամասների համար տես՝ **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ** #1:

7. **Լուսանկարներ** - լուսանկարի վերաբերյալ պահանջները ներկայացված են վերը: Հիշեք, որ Ձեր լուսանկարից զատ պետք է նաև ներկայացնել կնոջ/ամուսնու և բոլոր երեխաների (եթե այդպիսիք կան) լուսանկարները, տես՝ **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ** # 3:

8. **Փոստային հասցեն** – ում, հասցեի առաջին տող, հասցեի երկրորդ տող, քաղաք/գյուղ, մարզ/նահանգ/շրջան, փոստային ինդեքս, երկիր

9. **Ընթացիկ բնակության երկիր**

10. **Հեռախոսահամար** - ըստ հայեցողության

11. **Էլեկտրոնային փոստի (e-mail) հասցե - նշեք էլեկտրոնային փոստի այնպիսի հասցե, որից դուք ուղղակիորեն օգտվում եք: Ընտրվելու/շահելու մասին պաշտոնական նամակը Դուք չեք ստանա այս հասցեով: Սակայն եթե դուք շահել եք և Դիմումի կարգավիճակի ստուգման ժամանակ ստացել եք շահելու մասին ծանուցում և պատասխանել եք դրան, ապա այս հասցեով Պետքարտուղարությունը Ձեզ կտեղեկացնի, թե երբ կարող եք կրկին կատարել Դիմումի կարգավիճակի ստուգում, որպեսզի իմանաք ներգաղթային վիզայի հարցազրույցի հետ կապված մանրամասները: ԱՄՆ պետքարտուղարությունը կարող է այս հասցեով Ձեզ գրություններ ուղարկել, սակայն DV ծրագրում շահելու մասին ծանուցումը ոչ մի դեպքում Ձեզ էլ. փոստով չի ուղարկվի:**

12. **Կրթությունը -** ձեր ստացած ամենաբարձր կրթությունն այս պահի դրությամբ (1) տարրական կրթություն, (2) միջնակարգ/ավագ դպրոց, առանց կոչում, (3) միջնակարգ/ավագ դպրոց, կոչումով (4) արհեստագործական կրթություն, (5) որոշ բուհական կրթություն, (6) բուհական կրթություն (7) բակալավրի մակարդակի որոշ դասընթացներ, (8) մագիստրոսի կոչում, (9) թեկնածուական մակարդակի որոշ դասընթացներ, (10) թեկնածուական կոչում:

13. **Ամուսնական կարգավիճակ** - չամուսնացած, ամուսնացած, ամուսնալուծված, այրի, օրինականորեն բաժանված:

14. **Երեխաների թիվը** - դիմումում **պետք է** նշվի դիմողի կնոջ/ամուսնու և բոլոր կենդանի կենսաբանական երեխաների անուն-ազգանունը, ծննդյան օր/ամիս/տարին և վայրը: Դիմումում պետք է նաև նշվեն դիմումի ներկայացման պահին 21 տարին չլրացած և չամուսնացած կենդանի խորթ և որդեգրված երեխաները, նույնիսկ եթե դիմողը տվյալ պահին երեխայի մյուս ծնողի օրինական կինը/ամուսինը չէ, կամ երեխան կամ կինը/ամուսինը տվյալ պահին դիմողի հետ չեն բնակվում և չեն պատրաստվում նրա հետ ներգաղթել ԱՄՆ: Հիշեք, որ ամուսնացած և 21 տարեկան ու դրանից բարձր տարիք ունեցող երեխաները չեն կարող ընդգրկվել վիզայում, սակայն որոշ հանգամանքների առկայության դեպքում ԱՄՆ օրենսդրությունը պաշտպանում է երեխաներին "տարիքի պատճառով դուրս մնալուց": Եթե վիճակախաղի դիմումը ներկայացնելիս Ձեր երեխայի 21 տարին դեռ չէր լրացել, սակայն ներգաղթի վիզայի համար դիմելու ժամանակ արդեն լրացել է երեխայի 21 տարին, ապա Երեխայի կարգավիճակի պաշտպանության մասին օրենքով երեխան կարող է դուրս չմնալ և ներգաղթի վիզայի հետ կապված հարցերում դիտարկվել որպես 21 տարին չլրացած երեխա: **Եթե դիմումում դուք Ձեր բոլոր երեխաներին չեք թվարկում, ապա դա հետագայում կհանգեցնի վիզայի մերժման հիմնական դիմողի և մյուսների համար:** Տես՝ **ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ** #11.

15. **Ամուսնու/կնոջ տվյալները** - անուն, ազգանուն, ծննդյան օրը, ամիսը, թիվը, սեռը, ծննդյան վայրը (գյուղ/քաղաք, երկիր), լուսանկար: **Եթե դիմումում դուք չեք նշում Ձեր կնոջը/ամուսնուն, ապա դա հետագայում կհանգեցնի վիզայի մերժման: Դուք այստեղ պետք է նշեք Ձեր կնոջը/ամուսնուն եթե անգամ մտադիր եք վիզայի համար դիմելուց առաջ ամուսնալուծվել:**

16. **Երեխաների մասին տվյալներ.** Անուն-ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, թիվը, սեռը, ծննդյան վայրը (գյուղ/քաղաք, երկիր), լուսանկար: Ներառեք նույն տեղեկությունները 14-րդ կետում նշված բոլոր երեխաների համար:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մի տարածաշրջանի և երկրի համար սահմանված տեղերի հիման վրա ներկայացված բոլոր դիմումներից համակարգչային եղանակով պատահականորեն ընտրվում են այն դիմողները, որոնք կարող են դիմել ներգաղթային վիզայի համար: DV-2014 վիճակախաղի բոլոր մասնակիցներից պահանջվում է այցելել վիճակախաղի կայքը, որպեսզի պարզեն իրենց դիմումի կարգավիճակը կամ այլ կերպ ասած պարզեն արդյոք շահել են, թե ոչ: Շահողները իրենց շահման մասին կարող են տեղեկանալ սկսած 2013թ. մայիսի 1-ից առնվազն մինչև 2014թ. հունիսի 30-ը՝ այցելելով www.dvlottery.state.gov կայքը և ստուգելով իրենց դիմումի կարգավիճակը (Entry Status Check): **Ապա՝ շահող մասնակիցները կայքում կուղղորդվեն դեպի հաստատման էջը, որտեղ կլինեն հրահանգներ հետագա քայլերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկություններ ԱՄՆ ներգաղթի գործընթացի հետ կապված միջնորդավճարների վերաբերյալ: Կայքում Դիմումի կարգավիճակի ստուգումը (Entry Status Check) DV-2014 վիճակախաղում շահելու մասին իմանալու միակ ուղին է: Պետքարտուղարությունը փոստով շահման մասին ծանուցող նամակներ չի ուղարկի: Վիճակախաղում շահողները շահման մասին ծանուցում էլեկտրոնային փոստով ՉԵՆ ՍՏԱՆԱ: Ովքեր չեն շահել, այդ մասին կտեղեկանան կայքում՝ Դիմումի կարգավիճակը ստուգելով: ԱՄՆ դեսպանատներում և հյուպատոսական ծառայություններում շահողների ցուցակներ չեն լինելու:** Վիճակախաղը շահած անձի ամուսինը/կինը և 21 տարին չլրացած ու չամուսնացած երեխաները նույնպես կարող են դիմել վիզա ստանալու համար շահողի հետ միաժամանակ կամ էլ հետո: DV-2014-ի շահողները վիզաներ ստանալու համար կարող են դիմել 2013թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2014թ. սեպտեմբերի 30-ը:

Շահած դիմողներին և նրանց ընտանիքների անդամներին վիզաների տրամադրումը ՊԵՏՔ է ավարտվի 2014թ. սեպտեմբերի 30-ին մինչև կեսգիշեր: Ոչ մի դեպքում այս վիզաները չեն կարող տրվել կամ փոփոխվել այս ժամկետից հետո, իսկ ընտանիքի այն անդամները, ովքեր չեն ստացել վիզաներ մինչ այդ ժամկետը, այլևս չեն կարող միանալ ընտանիքի այն անդամին, որն արդեն գտնվում է ԱՄՆ-ում:

Փաստացի վիզա ստանալու համար անհրաժեշտ է, որ վիճակախաղը շահած անձինք համապատասխանեն ԱՄՆ օրենքներով նախատեսվող ԲՈԼՈՐ պայմաններին: Այս պահանջների ապահովման նպատակով իրականացվող ստուգումները կարող են բավականին երկար ժամանակ պահանջել, մասնավորապես այն երկրների բնիկների համար, որոնք այնպիսի երկրներից են, որտեղ ահաբեկչությունը պետականորեն հովանավորվում է:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վիճակախաղի մասնակցությունն անվճար է: ԱՄՆ պետքարտուղարությունը մասնակցության համար ոչ մի վճարում չի պահանջում: ԱՄՆ կառավարությունը ծրագիրն իրականացնում է առանց արտաքին մասնավոր մարմինների ներգրավման: Միջնորդները կամ այլ անձինք, որոնք առաջարկում են աջակցություն դիմումների պատրաստման և ներկայացման հարցում, դա անում են առանց ԱՄՆ կառավարության հետ համաձայնեցնելու և առանց ԱՄՆ կառավարության թույլտվության: Դիմողներն իրենց հայեցողությամբ կարող են օգտվել միջնորդների ծառայություններից: ՄԻԱԿ կայքը, որտեղ մարդիկ կարող են պաշտոնապես գրանցվել վիճակախաղին մասնակցելու նպատակով դա **www.dvlottery.state.gov** կայքն է:

Դիմողի կողմից անձամբ լրացված ու էլեկտրոնային եղանակով ուղարկված և միջնորդի կողմից պատրաստված ու ուղարկված դիմումների ընտրվելու հնարավորությունները հավասար են: Գրանցման փուլում ստացված բոլոր դիմումները ունեն ընտրվելու նույն հնարավորություններն ըստ տարածաշրջանների: **Հարկ է նշել, որ մի անձնավորության անունով մեկից ավելի դիմումներ ստանալիս բոլոր դիմումները չեղյալ են համարվում՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ աղբյուրներից են դրանք ստացվել:**

ՀԱՃԱԽԱԿԻ ՀՆՉՈՂ ՀԱՐՑԵՐ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂ», «ԲՆԻԿ» ԵՎ «ՎԵՐԱԳՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ»: ՀՆԱՐԱՎՈ՞Ր Է ՈՐ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՈՒՄ ԾՆՎԱԾ ՄԱՐԴԸ ԴԻՄԻ ԱՅՍ ԾՐԱԳՐԻՆ:

Մասնակցության իրավասություն տվող երկիրը սովորաբար այն երկիրն է, որտեղ դուք ծնվել եք: Մասնակցության իրավասություն տվող երկիրը կապ չունի տվյալ պահին Ձեր բնակության երկրի հետ: «Բնիկը» սովորաբար այն անձնավորությունն է, ով ծնվել է տվյալ երկրում, անկախ այն հանգամանքից, թե ներկայումս այդ անձնավորությունը բնակվում է այդ երկրում կամ այդ երկրի քաղաքացի է, թե ոչ: Ներգաղթի համատեքստում «բնիկ» հասկացությունը կարող է նաև վերաբերել այն անձնավորությանը, որն ըստ Ներգաղթի և քաղաքացիության մասին օրենքի 202(բ) կետի կարող է վերագրվել մի երկրի, որտեղ ինքը չի ծնվել:

Օրինակ՝ եթե հիմնական դիմողը ծնվել է մի այնպիսի երկրում, որն այս տարի իրավասու չէ մասնակցել այս ծրագրին, ապա նա կարող է դիմել, եթե նրա ամուսինը/կինը ծնվել է մի երկրում, որն իրավասու է մասնակցել ծրագրին: Քանի որ դիմողի մասնակցության իրավասությունը պայմանավորված է Ձեր ամուսնու/կնոջ երկրով, անհրաժեշտ է, որ դիմողի ամուսինը/կինը նույնպես համապատասխանի առաջադրվող պահանջներին և վիճակախաղում շահելու դեպքում երկուսը միասին պետք է դիմեն վիզայի համար և ԱՄՆ պետք է մուտք գործեն միաժամանակ: Նույն կերպ, ծնողների ծննդավայրը կարող է «վերագրվել» անչափահաս երեխային:

Ի վերջո, եթե մասնակիցը ծնվել է մի այնպիսի երկրում, որն այս տարի իրավասու չէ մասնակցել այս ծրագրին, կարող է դիմել իր ծնողներից մեկի ծննդավայրի հիման վրա, եթե նրա ծնվելու պահին ծնողներից ոչ մեկը չի եղել մի այնպիսի երկրի մշտական բնակիչ, որն իրավասու չէ մասնակցել ծրագրին: Ընդհանուր առմամբ, մարդիկ չեն համարվում տվյալ երկրի մշտական բնակիչ, եթե նրանք չեն ծնվել այդ երկրում կամ ձեռք չեն բերել այդ երկրի քաղաքացիություն: Ժամանակավոր այցով երկրում գտնվող կամ որևէ կազմակերպության կամ կառավարության անունից գործնական և մասնագիտական հարցերով ժամանակավորապես այդ երկրում բնակվող մարդիկ չեն համարվում «բնիկներ»:

Այն մասնակիցը, որը դիմում է «վերագրելիության» հիմքով, պետք է անպայմանորեն դիմումի 6-րդ կետում արտացոլի այս փաստը: Հիշեք, **մասնակցության իրավասության** կամ **վերագրելիության** սխալ երկիր նշելու դեպքում ձեր դիմումը կարող է որակազրկվել:

2. ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՀԱՄՈԶՎԵԼ, ՈՐ ՇԱՀԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՄ ՍՏԱՑԱԾ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆ Է; ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐԵԼԻ Է ՍՏՈՒԳԵԼ, ՈՐՊԵՍԶԻ ՀԱՄՈԶՎԵՄ ՈՐ ԻՐՈՔ ՇԱՀԵԼ ԵՄ:

Պահեք առցանց գրանցումն հաստատող էջն առնվազն մինչև 2014թ. հունիս ամիսը: Այդ նույնականացման համարն անհրաժեշտ է ձեզ, որպեսզի դուք կարողանաք www.dvlottery.state.gov կայքում ստուգել ձեր դիմումի կարգավիճակը և ստանալ տեղեկություններ: Կարգավիճակի ստուգումը (Entrant Status Check) միակ եղանակն է, որի միջոցով DV-2014-ի մասնակիցները տեղեկություն են ստանում շահելու վերաբերյալ, ինչպես նաև հրահանգներ հետագա քայլերի մասին ու ներգաղթի վիզայի հարցազրույցի օրվա և ժամի մասին: Հիշեք, որ խաղարկային վիզաների www.dvlottery.state.gov կայքը ԱՄՆ պետքարտուղարության կողմից լիազորված միակ կայքն է, որտեղ պաշտոնապես ներկայացվում են դիմումները, և որտեղ հետագայում ստուգվում են ներկայացված դիմումների կարգավիճակը:

Մասնակիցները կարող են ստուգել իրենց դիմումի կարգավիճակը 2013թ. մայիսի 1-ից սկսած մինչև 2014թ. հունիսի 30-ը: **Ձեր դիմումի կարգավիճակը ստուգելու համար անհրաժեշտ է ունենալ դիմումի ստացումն հաստատող տեղեկությունները:** Միայն շահող մասնակիցներն են, որ կարգավիճակը ստուգելիս կստանան հետագա հրահանգներ այն մասին, թե ինչպես դիմեն վիզայի համար և մյուս անհրաժեշտ քայլերի մասին: Նրանք ովքեր չեն շահել, այդ մասին կիմանան կարգավիճակը DV կայքում ստուգելիս: Չշահողների համար հետագա հրահանգներ չեն լինի: ԱՄՆ դեսպանատներն ու հյուպատոսական ծառայությունները

կարգավիճակի ստուգման համակարգի հետ առնչություն չունեն և չեն կարող ստուգել Ձեր կարգավիճակը: Պետքարտուղարությունը ՉԻ ԿԱՐՈՂ շահողների ցուցակ ապահովել:

Պատահական ընտրանքով շահած մասնակիցները կստանան հրահանգներ ներգաղթի վիզայի դիմումի համար դիմելու քայլերի վերաբերյալ, երբ նրանք ստուգեն իրենց դիմումի կարգավիճակը www.dvlottery.state.gov կայքում՝ օգտագործելով հաստատման էջի տվյալները: Այդ հրահանգներում մասնավորապես նշվում է, որ շահող մասնակիցները ներգաղթի վիզայի ստացման հետ կապված բոլոր վճարումները կատարելու է անձամբ՝ ԱՄՆ դեսպանատանը կամ հյուպատոսարանում այն ժամանակ, երբ ներկայանա հարցազրույցի: Վիճակախաղում շահած և ներգաղթի վիզայի համար դիմում ներկայացրած անձինք երբեք փոստով, Վեսթերն Յունիոն կամ դրամական փոխանցումների որևէ այլ ծառայության միջոցով չպետք է որևէ վճարում կատարեն: Այն շահողները, ովքեր արդեն իսկ ԱՄՆ-ում են գտնվում և ովքեր կացության կարգավիճակի փոփոխություն են ձևակերպելու, կստանան լրացուցիչ հրահանգներ վճարումները որևէ ամերիկյան բանկի կատարելու վերաբերյալ:

DV խաղարկությանը մասնակցելու դիմումները ներկայացվում են ինտերնետով՝ պաշտոնապես այդ նպատակի համար նախատեսված ԱՄՆ կառավարության www.dvlottery.state.gov կայքում: ԱՄՆ կառավարությունը երբեք էլեկտրոնային փոստով ծանուցում չի ուղարկում շահողներին և DV-2014-ի դեպքում ևս որևէ ծանուցում էլեկտրոնային փոստով չի ուղարկվի: Էլեկտրոնային փոստով շահող մասնակիցներին կուղարկվի միայն հիշեցում հարցազրույցի նշանակման վերաբերյալ, այն բանից հետո կարգավիճակի ստուգմամբ նրանք պարզել են, որ իրենք շահել են ու կատարել են այնտեղ ներկայացված հրահանգները: Էլեկտրոնային փոստով ստացված այդ հաղորդագրությունները շահողներին կհիշեցնեն, որ անհրաժեշտ է այցելել կարգավիճակի ստուգման էջը, որտեղ նրանք կգտնեն հարցազրույցի օրվա և ժամի մասին տեղեկությունները: Հարցազրույցի օրն ու ժամը էլեկտրոնային փոստի հաղորդագրության մեջ չեն նշվի:

Հարկ է նշել, որ միայն .gov վերջավորություն ունեցող կայքերն են, որ հանդիսանում են ԱՄՆ կառավարության պաշտոնական կայքեր: Բազմաթիվ այլ կայքեր, որոնք կառավարության կայքեր չեն, (.com, .org, կամ .net վերջավորություններով) տրամադրում են վիզաների ու ներգաղթի մասին տեղեկություններ ու մատուցում ծառայություններ այդ ոլորտում: Անկախ այդ կայքերի բովանդակությունից՝ պետքարտուղարությունը չի երաշխավորում, չի առաջարկում կամ հովանավորում այդ կայքերում ներկայացված տեղեկություններն ու նյութերը:

Որոշ կայքեր ձգտում են մոլորության մեջ գցել մարդկանց՝ ներկայանալով որպես պաշտոնական կայքեր: Այդ կայքերից ձեզ կարող են էլեկտրոնային փոստով նամակներ ուղարկել, որպեսզի իրենց առաջարկները հրամցնեն ձեզ: Այդ կայքերը կարող են պահանջել, որ դուք վճարեք որոշ ծառայությունների համար, ինչպիսիք են օրինակ ձևաթղթերի կամ ներգաղթային ընթացակարգերի մասին տեղեկությունների տրամադրումը, որոնք անվճար հասանելի են պետքարտուղարությունի կայքում կամ ԱՄՆ դեսպանության կամ հյուպատոսարանի կայքերում: Բացի այդ, ձեզնից գումար կորզելու նպատակով այդ կայքերը կարող են նաև պահանջել վճարել որոշ ծառայությունների համար, որոնք այդպես էլ չեն մատուցվի ձեզ (օրինակ՝ վճարումներ ներգաղթային դիմումի կամ վիզայի դիմումի համար): Եթե մի անգամ այդ պահանջներով գումար ուղարկեք, ըստ երևույթին դրանով նրանք կսահմանափակվեն: Նաև զգուշացեք անձնական տվյալներ տրամադրելուց, քանզի ձեր տվյալները կարող են օգտագործվել հանցավոր նպատակներով (ինքնության յուրացում):

3. ԻՆՉՈ՞Ի ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐԻ ԲՆԻԿՆԵՐ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԾՐԱԳՐԻՆ:

Այս ծրագրի շրջանակներում վիզայի ստացման հնարավորություն է տրվում այն երկրներին, որտեղից ԱՄՆ ներգաղթողները մեծ թիվ չեն կազմում: Օրենքով սահմանվում է, որ ներգաղթի բարձր ցուցանիշներ ունեցող երկրները չեն կարող մասնակցել այս ծրագրին. սա մասնավորապես վերաբերում է այն երկրներին, որտեղից ընտանիքի հովանավորության և աշխատանքային առաջարկների վրա հիմնված վիզաներով ԱՄՆ ներգաղթած անձանց թիվը վերջին 5 տարիների ընթացքում գերազանցել է 50.000 հոգին: Ամեն տարի ԱՄՆ ներգաղթի և հպատակագրման ծառայությունները հաշվառում են վերը նշված կատեգորիաների վիզաներով ներգաղթողներին և այդ ցուցանիշների հիման վրա որոշում, թե որ երկրների բնակիչները չեն կարող մասնակցել այս ծրագրին: Սա կատարվում է ամեն տարի, ուստի մասնակցելու իրավունք չունեցող երկրների ցուցակը ամեն տարի ենթակա է փոփոխման:

4. ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ ՔԱՆԻ՞ ՎԻԶԱ Է ԽԱՂԱՐԿՎԵԼՈՒ DV-2014-Ի ԺԱՄԱՆԱԿ:

Ըստ օրենքի այս ծրագրով ամեն տարի խաղարկվում է առավելագույնը 55.000 մշտական բնակության վիզա: Սակայն 1997թ. նոյեմբերին Կոնգրեսի ընդունած Նիկարագուական ճշգրտման և Կենտրոնական Ամերիկայի օգնության (NACARA) օրենքով որոշվեց, որ 1999թ. սկսած այդ 55000 վիզաներից 5000-ը օգտագործվելու են NACARA ծրագրի համար: Արդեն 2000թ.-ից խաղարկվող վիզաների փաստացի թիվը պակասեցվեց 5.000-ով ու հավանական է, որ դա կպահպանվի նաև 2014թ. խաղարկության ժամանակ:

5. DV-2014 ԾՐԱԳՐՈՎ Ի՞ՆՉ ՔԱՆԱԿԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԿԱՆ ԸՍՏ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ:

ԱՄՆ ներգաղթի ու հպատակագրման ծառայությունները ամեն տարի Ներգաղթի և քաղաքացիության մասին օրենքի 203(գ) կետով սահմանված հատուկ բանաձևով հաշվարկում են վիզաների առավելագույն քանակությունը ՝ ըստ տարածաշրջանների: Հաշվարկները պատրաստ լինելուն պես այդ տվյալները կհրապարակվեն:

6. Ե՞ՐԲ ԵՆ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ DV-2014 ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ:

DV-2014-ի համար դիմումներն ընդունվում են **2012թ. հոկտեմբերի 2-ից , երեքշաբթի (ստանդարտ արևելյան ժամանակով 12:00-ից (Գրիվնիչ -4)) մինչև 2012թ. նոյեմբերի 3-ը, շաբաթ (ստանդարտ արևելյան ժամանակով 12:00 (Գրիվնիչ -4)):** Ամեն տարի միլիոնավոր մարդիկ են դիմում: Դիմումների մեծ քանակության պատճառով հարկ է լինում կատարել մեծածավալ աշխատանք հաջողակներին ընտրելու համար: Գրանցումը հոկտեմբերի 2-ից մինչև նոյեմբերի 3-ն անցկացնելն ապահովում է, որ մասնակիցները ժամանակին տեղեկանան շահելու մասին, և թե նրանք, թե մեր հյուպատոսական ծառայությունները ժամանակ ունենան պատրաստել և լրացնել վիզայի դիմումների գրանցումները: Մասնակիցներին խորհուրդ ենք տալիս գրանցման համար չսպասել վերջին օրերին, քանի որ գրանցվողների մեծ թվի պատճառով հնարավոր է, որ վերջում համակարգը դանդաղ աշխատի: Գրանցման վերջին օրը 2012թ. նոյեմբերի 3-ն է:

7. ԱՄՆ-ՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՐԴԻԿ ԿԱՐՈ՞Ղ ԵՆ ԴԻՄԵԼ ԱՅՍ ԾՐԱԳՐԻՆ:

Մասնակիցը կարող է լինել ԱՄՆ-ում կամ ցանկացած այլ երկրում, և բոլորովին նշանակություն չունի, թե որտեղից է դիմումը ներկայացվում:

8. ԿԱՐՈՂ Է ԱՐԴՅՈ՞Ք ՄԱՍՆԱԿԻՑԸ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ:

Ոչ, չի կարող, քանի որ օրենքով նախատեսվում է, որ յուրաքանչյուր ոք կարող է ներկայացնել միայն մեկ դիմում: **Մեկից ավելի դիմում ներկայացրած անձինք զրկվում են խաղարկությանը մասնակցելու իրավունքից:** ԱՄՆ պետքարտուղարությունը կօգտագործի ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք թույլ կտան հայտնաբերել կրկնվող դիմումները: Մեկից ավելի դիմում ներկայացրած մարդիկ չեն կարողանա մասնակցել խաղարկությանը և, բացի այդ, նրանց մասին տվյալները էլեկտրոնային եղանակով կպահվեն Պետքարտուղարությունում: Վիճակախաղին մասնակցելու համար դուք կարող եք ամեն տարի մեկ անգամ գրանցվել:

9. ԿԻՆԸ ԵՎ ԱՄՈՒՍԻՆԸ ԿԱՐՈ՞Ղ ԵՆ ԱՌԱՆՁԻՆ-ԱՌԱՆՁԻՆ ԴԻՄԵԼ:

Այո, կարող են, եթե նրանցից յուրաքանչյուրը համապատասխանում է առաջադրված չափանիշներին: Եթե նրանցից մեկն ընտրվի, ապա մյուսը կարող է ստանալ ածանցյալ կարգավիճակ:

10. ԸՆՏԱՆԻՔԻ Ո՞Ր ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՊԵՏՔ Է ՆՇԵԼ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՋ:

Դիմումի մեջ պետք է անպայման նշվեն Ձեր ամուսինը/կինը և մինչև 21 տարեկան չամուսնացած կենդանի երեխաները՝ անկախ այն հանգամանքից նրանք ապրում են Ձեզ հետ, թե ոչ, կամ էլ արդյոք պատրաստվում են Ձեզ հետ միասին ներգաղթել ԱՄՆ կամ ոչ: Ձեր ամուսնուն/կնոջը պետք է նշեք նույնիսկ այն դեպքում, եթե միմյանց հետ չեք ապրում: Եթե օրինականորեն բաժանված եք (կա գրավոր համաձայնություն, որը հիմնվում է

դատավճռի վրա) կամ ամուսնալուծված, ապա այդ դեպքում ամուսնուն/կնոջը պետք չէ նշել դիմումի մեջ: **Դուք պետք է նշեք Ձեր մինչև 21 տարեկան բոլոր չամուսնացած կենդանի երեխաներին,** լինեն դրանք Ձեր երեխաները, թե օրինականորեն որդեգրված կամ խորթ երեխաներ: Չեն նշվում միայն այն երեխաները, որոնք արդեն ԱՄՆ քաղաքացի են, կամ ունեն ԱՄՆ-ում մշտական բնակության իրավունք: **Թվարկեք մինչև 21 տարեկան բոլոր չամուսնացած երեխաներին, նույնիսկ եթե նրանք այլևս Ձեզ հետ չեն ապրում կամ էլ մտադիր չեն այս ծրագրով ներգաղթել ԱՄՆ:** ԱՄՆ քաղաքացի կամ ԱՄՆ-ում մշտական բնակության իրավունք ունեցող երեխաներին նշել պետք չէ:

Այն փաստը, որ դուք դիմումում նշել եք Ձեր ընտանիքի բոլոր անդամներին, չի նշանակում, որ նրանք բոլորը Ձեր հետ ներգաղթելու են ԱՄՆ: Նրանք կարող են մնալ: Սակայն, եթե վիզայի համար դիմում ներկայացնելիս դուք նշում եք Ձեր խնամքի տակ գտնվող մեկին, որը նշված չէր վիճակախաղի դիմումի մեջ, ապա դուք վիզա չեք ստանա: (Սա վերաբերում է խնամքի տակ գտնվող այն անձանց, ովքեր վիճակախաղին մասնակցելու դիմումը ներկայացնելու պահին եղել են և ոչ նրանց, ովքեր ի հայտ են եկել դրանից հետո): Ձեր ամուսինը/կինը նույնպես կարող է առանձին դիմում ներկայացնել, չնայած նա ներառված է Ձեր դիմումի մեջ, սակայն երկու դիմումներում էլ պետք է լինի ամբողջական տեղեկատվություն ընտանիքի անդամների վերաբերյալ: Մանրամասների համար՝ տես հարց 9-ը:

11. ԿԱՐՈ՞Ղ Է ՆՈՒՅՆԱՍԵՌԱԿԱՆ ԶՈՒՅԳԸ ՆԵՐԱՌՎԵԼ ՄԵԿ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՋ:

ԱՄՆ ներգաղթի նպատակներով ներգաղթային օրենսդրությունը նույնասեռական ամուսնությունները չի ճանաչում: Նույնասեռական զույգը կարող է առանձին-առանձին դիմում ներկայացնել և մասնակցել խաղարկությանը, եթե համապատասխանում են սահմանված չափանիշներին:

12. ԱՄԵՆ ՄԵԿՆ ԱՆՁԱ՞ՄԲ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԻ ԻՐ ԴԻՄՈՒՄԸ, ԹԵ ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ ԿԱՐՈՂ Է ՀԱՆԴԵՍ ԳԱԼ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՈՒՆԻՑ:

Մասնակիցները կարող են իրենք ներկայացնել իրենց դիմումները, կամ էլ ինչ-որ մեկը կարող է դա նրանց համար անել: Անկախ այն հանգամանքից դիմումը հենց մասնակիցն է լրացրել, թե ինչ-որ մի փաստաբան, ազգական կամ ընկեր օգնել է նրան, յուրաքանչյուր մարդու անունով պետք է ներկայացվի միայն մեկ դիմում և ներկայացվող տվյալների ամբողջականության ու ճշգրտության ապահովումը դիմողի պատասխանատվությունն է: Վիճակախաղի բոլոր մասնակիցները, թե շահող, թե չշահող, կարող են 2013թ. մայիսի 1-ից սկսած ինքնուրույն օնլայն/առցանց ստուգել իրենց դիմումի կարգավիճակը վիճակախաղի www.dvlottery.state.gov կայքում: Դրա համար անհրաժեշտ է պահել մասնակցության դիմումի ստացումը հաստատող ծանուցումը:

13. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Ի՞ՆՉ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՒՄ:

Օրենքն ու կանոնակարգերը պահանջում են, որ մասնակիցները ունենան առնվազն միջնակարգ, կամ դրան համարժեք կրթություն, կամ վերջին 5 տարիների ընթացքում առնվազն երկու տարի մի այնպիսի աշխատանք կատարած լինեն, որի համար պահանջվում է երկու տարվա ուսուցում, կամ երկու տարվա աշխատանքային փորձ: Միջնակարգ կրթությունը սահմանվում է, որպես ԱՄՆ 12-ամյա տարրական և միջնակարգ կրթություն, կամ դրան համարժեք կրթություն այլ երկրի հանրակրթական ծրագրով: Այս պահանջին բավարարելու համար անհրաժեշտ է կրթություն հանրակրթական ծրագրով, հեռակա ծրագրերը կամ համապատասխանության վկայականները (օրինակ՝ G.E.D.) ընդունելի չեն: Կրթությունն ու աշխատանքային փորձը հաստատող փաստաթղթեր վիճակախաղի մասնակցության դիմումի հետ ներկայացնել պետք չէ. դրանք անհրաժեշտ է ներկայացնել հյուպատոսական պաշտոնյային, շահելու դեպքում վիզայի հարցազրույց անցնելու ժամանակ:

14. Ո՞Ր ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ:

Աշխատանքային փորձի համապատասխանությունը որոշելիս կօգտագործվի ԱՄՆ աշխատանքի և

զբաղվածության նախարարության O*Net Online տվյալների օնլայն/առցանց բազան: Աշխատանքի նախարարության O*Net Online Database տվյալների օնլայն/առցանց բազան աշխատանքային փորձը դասակարգում է 5 աշխատանքային գոտիներում: Չնայած այս տվյալների բազայում թվարկված են բազմաթիվ մասնագիտություններ, դրանցից բոլորը չէ, որ համապատասխանում են վիճակախաղի պահանջներին: Այս վիճակախաղին, Ձեր ունեցած աշխատանքային փորձի հիման վրա մասնակցելու համար, դուք վերջին 5 տարիների ընթացքում առնվազն 2 տարի պետք է աշխատած լինեք **4-րդ ու 5-րդ գոտիներում նշված մասնագիտություններից մեկով, որոնք դասակարգված են հատուկ մասնագիտական ուսուցման 7.0 կարգում, կամ ավելի բարձր:**

15. ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԱՅՍ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՏՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՔՈՒՄ:

Դրանք զետեղված են O*Net Online տվյալների օնլայն/առցանց բազայում: Հետևեք այս քայլերին պարզելու՝ արդյոք Ձեր մասնագիտությունը համապատասխանում է պահանջներին: Ընտրեք "Find Occupations"/գտեք մասնագիտություններ/ կոճակը, ապա ընտրեք որոշակի "Job Family"/աշխատանքի կատեգորիա/: Օրինակ. կարող եք ընտրել "ճարտարապետ" կամ "ինժեներ" մասնագիտությունները և սեղմել GO կոճակը: Հետո սեղմում եք կոնկրետ մասնագիտության հղումը: Շարունակելով դիտարկել նույն օրինակը, կարող եք, ասենք ընտրել "ավիատիեզերական ինժեները": Ընտրելով համապատասխան մասնագիտության հղումը դուք արդեն կարող եք բացել "Job Zone"-ը՝ պարզելու այդ գոտու համարն ու հատուկ մասնագիտական ուսուցման դասը: Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ Մասնագիտությունների ցանկը:

16. ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԸՆՏՐՎՈՒՄ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ՇԱՀՈՂՆԵՐԸ:

Բոլոր տարածաշրջաններից ստացվող դիմումները համարակալվում են և գրանցման ավարտից հետո համակարգիչը պատահական ընտրանքով կորոշի վիճակահանության շահողներին: Ընտրվածներն ըստ տարածաշրջանների կգրանցվեն ընտրության հերթականության համաձայն: Գրանցման ժամանակահատվածում ներկայացված բոլոր դիմումների ընտրության հնարավորությունները նույնն են: Շահող մասնակիցներն իրենց շահման մասին կկարողանան տեղեկանալ 2013թ. մայիսի 1-ից սկսած՝ այցելելով www.dvlottery.state.gov կայք և ստուգելով իրենց դիմումի կարգավիճակը: Պետքարտուղարության Քենտուքիի հյուպատոսական կենտրոնը կշարունակի զբաղվել այդ հարցերով մինչև բոլոր ընտրվածներին տեղյակ պահի, որ նրանք վիզայի համար ներկայանան ԱՄՆ հյուպատոսական ծառայություններ իրենց բնակության երկրում, իսկ ԱՄՆ-ում գտնվողները դիմեն ԱՄՆ ներգաղթի ու հպատակագրման ծառայություններին իրենց կարգավիճակը փոխելու նպատակով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Շահելու մասին պաշտոնապես տեղեկանալու համար անհրաժեշտ է ստուգել դիմումի կարգավիճակը www.dvlottery.state.gov էջի Entrant Status Check բաժնում՝ սկսած 2013թ. մայիսի 1-ից մինչև առնվազն 2014թ. հունիսի 30-ը: Պետքարտուղարությունը շահողներին այլևս սովորական փոստով կամ էլեկտրոնային փոստով ծանուցում կամ նամակ չի ուղարկում: Եթե սովորական փոստով կամ էլեկտրոնային փոստով ծանուցում եք ստանում վիճակախաղում շահելու վերաբերյալ, ապա իմացեք, որ դա օրինական ուժ ունեցող ծանուցում չէ: Պետքարտուղարությունից ստացվող էլեկտրոնային փոստով գրությունները Ձեզ կհրահանգեն կարգավիճակը ստուգել Entrant Status Check բաժնում: Պետքարտուղարությունը երբեք ձեզնից չի պահանջի փոստով կամ դրամական փոխանցումների համակարգերի, օրինակ Վեսթերն Յունիոնի միջոցով գումար ուղարկել:

17. ՇԱՀՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԿԱՐՈ՞Ղ ԵՆ ԴԻՄԵԼ ԱՄՆ ՆԵՐԳԱՂԹԻ ՈՒ ՀՊԱՏԱԿԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ:

Այո, ֆիզիկապես ԱՄՆ-ում գտնվող անձինք կարող են դիմել ԱՄՆ ներգաղթի ու հպատակագրման ծառայություններին մշտական բնակչի կարգավիճակ ստանալու նպատակով, եթե նրանք Ներգաղթի և քաղաքացիության մասին օրենքի 245 կետով իրավասու են փոխել իրենց կարգավիճակը: **Մասնակիցները պետք է իմանան, որ ԱՄՆ ներգաղթի ու հպատակագրման ծառայությունների հետ իրենց գործերը, այդ թվում**

կապված իրենց կնոջ/ամուսնու և 21 տարին չլրացած երեխաների հետ, պետք է ավարտեն մինչև 2014թ. սեպտեմբերի 30-ը, քանի որ այդ ժամկետից հետո DV-2014-ի արդյունքները չեղյալ են համարվում: 2014թ. սեպտեմբերի 30-ին կեսգիշերից հետո ոչ մի վիզա այս ծրագրի շրջանակներում չի տրամադրվի:

18. ՉՇԱՀԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՆ ԱՅԴ ՄԱՍԻՆ ՏԱՆՈՒՑՈՒՄ ԿՍՏԱՆԱ՞Ն:

Խաղարկության մասնակիցներր, այդ թվում և այն անձինք, ովքեր չեն շահի, հնարավորություն կունենան վիճակախաղի www.dvlottery.state.gov կայքում ստուգել իրենց դիմումի կարգավիճակը և պարզել՝ շահել են, թե ոչ:: Դիմումը ներկայացնելիս էկրանին հայտնվում է դիմումի ստացումը հաստատող ծանուցում, որն անհրաժեշտ է պահել, որպեսզի հնարավոր լինի օնլայն/առցանց ստուգել DV-2014-ի դիմումի կարգավիճակը 2013թ. մայիսի 1-ից սկսած մինչև 2014թ. հունիսի 30-ը: (Նախորդ վիճակախաղի՝ DV-2013-ի տվյալները հասանելի կլինեն 2012թ. մայիսի 1-ից մինչև 2013 հունիսի 30-ը):

19. ՔԱՆԻ՞ ՄԱՍՆԱԿԻՑ ԿՇԱՀԻ:

DV-2014-ի ընթացքում խաղարկվում է 50.000 վիզա, սակայն վիճակահանությամբ կրնտրվեն ավելի շատ դիմողներ: Քանի որ հավանական է, որ ընտրված առաջին 50.000-ի մեջ կարող են լինել մարդիկ, որոնք որակավորված չեն լինի, կամ էլ ոմանք կարող են ընտրվելուց հետո վիզայի դիմումներ չներկայացնել, ուստի ընտրվում է 50.000 հոգուց ավել մարդ՝ ապահովելու բոլոր 50.000 վիզաների տրամադրումը: Սա նաև նշանակում է, որ վիճակախաղում շահած ոչ բոլոր մարդիկ են, որ կստանան վիզա: Շահած մասնակիցները Entrant Status Check բաժնում կարգավիճակը ստուգելով կիմանան իրենց հերթական համարը ցուցակում, իսկ վիզայի հարցազրույցները, այն շահողների համար, ովքեր կներկայացնեն ըստ հրահանգների պահանջվող բոլոր տեղեկություններն ու նախքան հարցազրույցը պահանջվող թղթաբանությունը, կսկսվեն 2013թ. հոկտեմբերի սկզբից: Հրահանգների համաձայն պահանջվող տեղեկատվությունն ապահոված շահող մասնակիցներն իրենց հարցազրույցի օրվա մասին կտեղեկանան պաշտոնական կայքում դիմումի կարգավիճակը ստուգելու միջոցով: Հարցազրույցի մասին տեղեկատվությունը նրանց հասանելի կլինի հարցազրույցից 4-6 շաբաթ առաջ: Ամեն ամիս վիզաներ կթողարկվեն այն անձանց համար, ովքեր արդեն պատրաստ են հարցազրույցներին: Երբ արդեն 50.000 վիզաներն էլ տրամադրված լինեն, տարվա ծրագիրը կավարտվի: Սկզբունքորեն հնարավոր է, որ վիզաները սպառվեն նախքան 2014թ. սեպտեմբերը: Վիճակախաղում շահած մասնակիցները, որոնք ուզում են վիզա ստանալ, պետք է արագ գործեն: **Վիճակախաղում շահելը չի նշանակում, որ վիզայի ստացումը երաշխավորված է: Պետք է բավարարել նաև վիզայի ստացման համար առաջադրվող պահանջներին: Ներգաղթի վիզաներ կտրվեն վիզայի տրամադրման պահանջներին բավարարող առաջին 50.000 հոգուն:**

20. Ո՞Ր ՏԱՐԻՔԻՑ ՄԱՐԴԻԿ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ ԱՅՍ ԾՐԱԳՐԻՆ:

Ծրագրին դիմելու համար նվազագույն տարիք չի սահմանված, սակայն հաշվի առնելով միջնակարգ կրթության կամ աշխատանքային փորձի պահանջը, կարելի է եզրակացնել, որ 18-ից ցածր տարիք ունեցող դիմողները հիմնականում չեն համապատասխանի այդ պահանջներին: Դիմողի ծնողները կամ քույրերն ու եղբայրները չեն կարող դիտարկվել որպես դիմողի խնամքի տակ գտնվող անձինք, ուստի նրանք դիմումի մեջ չեն նշվում:

21. ԱՅՍ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ Ի՞ՆՉ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎՈՒՄ:

Էլեկտրոնային վիճակախաղին մասնակցությունն անվճար է: Վճարում նախատեսվում ներգաղթային վիզայի համար և կկատարվի ավելի ուշ, երբ շահող մասնակիցները դիմեն ԱՄՆ հյուպատոսական ծառայություններին վիզայի տրամադրման համար: Այն շահող մասնակիցները, ովքեր կարգավիճակի փոփոխում են ձևակերպելու հենց Միացյալ Նահանգների տարածքում, այդ գումարը կարող են ուղղակիորեն վճարել Ներգաղթի և հպատակագրման ծառայության գրասենյակներում: Վճարումների մասին մանրամասներ կներկայացվեն շահող մասնակիցներին տրամադրվող հրահանգներում:

22. ԵԹԵ ՇԱՀՈՒՄ ԵՄ ՎԻՃԱԿԱԽԱՂՈՒՄ, ԱՊԱ ՆԵՐԳԱՂԹԱՅԻՆ ՎԻԶԱՅԻ ԴԻՄՈՒՄ ԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՎ ՄԵՐԺՎՈՒՄ, ԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՒՄ ԵՆ ԱՐԴՅՈ՞Ք ՆԵՐԳԱՂԹԱՅԻՆ ՎԻԶԱՅԻ

ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ;

Վիզայի համար կատարված վճարումները վերադարձման ենթակա չեն: Վիզայի դիմում ներկայացնողները պետք է հրահանգներում ներկայացվող բոլոր պահանջները բավարարեն: Եթե հյուպատոսական պաշտոնյան որոշում է, որ դիմողը վիզայի ստացման պահանջներին չի համապատասխանում կամ ԱՄՆ օրենսդրությունից բխող որևէ այլ պատճառով իրավասու չէ ստանալ ներգաղթային վիզա և նրան վիզայի տրամադրումը մերժվում է, իսկ կատարած վճարումները ետ չեն վերադարձվում:

23. ԱՅՍ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՎԻԶԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՉԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՏՈՒԿ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵ՞Ն ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՇՐՋԱՆՑԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ:

Ծրագրի շահող մասնակիցները պետք է համապատասխանեն Ներգաղթի և քաղաքացիության մասին օրենքով սահմանված ներգաղթի պայմաններին: Բացառություններ կարող են լինել միայն այն դեպքերում, որոնք սահմանված են օրենքով: Բացառությունների որոշ ընդհանուր դրույթներ գործում են ԱՄՆ քաղաքացի կամ ԱՄՆ մշտական բնակչի կարգավիճակ ունեցող մոտ ազգականներ ունեցողների համար, սակայն, հաշվի առնելով այս ծրագրի ժամանակային սահմանափակումները, շահողները դժվար թե կարողանան օգտվել այդ պայմաններից:

24. ԱՅԼ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐՈՎ ՆԵՐԳԱՂԹԱՅԻՆ ՎԻԶԱՅԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԱԾ ԱՆՁԻՆՔ ԿԱՐՈ՞Ղ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԱՅՍ ԾՐԱԳՐԻՆ:

Այո, այդ մարդիկ կարող են մասնակցել նաև այս ծրագրին:

25. ՇԱՀՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԻՆՉՔԱ՞Ն ԺԱՄԱՆԱԿ ՈՒՆԵՆ ՎԻԶԱՅԻ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

DV-2014 ծրագրի վիճակահանությամբ շահած մարդիկ վիզա ստանալու համար կարող են դիմել 2014 ֆինանսական տարվա ընթացքում, այսինքն՝ 2013թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2014թ. սեպտեմբերի 30-ը: **Շահող մասնակիցները պետք է մինչև ֆինանսական տարվա ավարտը, այսինքն՝ 2014թ. սեպտեմբերի 30-ը հասցնեն ստանալ վիզա, կամ էլ փոխեն իրենց կարգավիճակը**: Եթե այդ ժամկետում շահող մասնակիցները չեն ստանում վիզա, ապա շահումը համարվում է ուժը կորցրած: Նաև ընտանիքի անդամները (ամուսին/կին և երեխաներ), որոնք իրավասու են ստանալ վիզաներ DV-2014-ով պետք է հասցնեն վիզաներ ստանալ 2013թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2014թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում: Այն մասնակիցները, որոնք դիմում են ԱՄՆ-ից դուրս, կայքում դիմումի կարգավիճակի ստուգման միջոցով կստանան ծանուցում իրենց հարցազրույցի օրվա վերաբերյալ՝ դրանից 4-6 շաբաթ առաջ:

26. ԵԹԵ ՇԱՀՈՂ ՄԱՍՆԱԿԻՑԸ ՄԱՀԱՆՈՒՄ Է, Ի՞ՆՉ ԸՆԹԱՑՔ Է ՍՏԱՆՈՒՄ ԱՅԴ ԳՈՐԾԸ

Շահող մասնակցի մահը նշանակում է, որ այդ գործը փակվում է և նրա դիմումում ներառված կինը/ամուսինը և/կամ երեխաները իրավասու չեն ստանալ ներգաղթի վիզա:

27. ԵՐԲՎԱՆԻ՞Ց Է ՀՆԱՐԱՎՈՐ ԼՐԱՑՆԵԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ:

Էլեկտրոնային դիմումները հնարավոր կլինի լրացնել 2012թ. հոկտեմբերի 2-ից մինչև 2012թ. նոյեմբերի 3-ը (սկիզբը և վերջը ժամը 12-ին ստանդարտ արևելյան ժամանակով):

28. ԿԱՐՈ՞Ղ ԵՄ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ ՀԻՇԵԼ ԻՄ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ՎՐԱ WORD ԿԱՄ ՈՐԵՎԷ ԱՅԼ ՖՈՐՄԱՏՈՎ ԵՎ ՀԵՏՈ ԼՐԱՑՆԵԼ ԱՅՆ:

Ոչ, դուք չեք կարող այն հիշել Ձեր համակարգչի վրա և հետո լրացնել ու ուղարկել: Գրանցման ձևը գործում է միայն

օնլայն/առցանց ռեժիմում: Դրանով այն դառնում է առավել ունիվերսալ, քան այլ ֆորմատների դեպքում: Բացի այդ, պահանջվում է ինֆորմացիան լրացնել ու ուղարկել օնլայն/առցանց ռեժիմում:

29. ԵԹԵ ԵՍ ՏԵՍԱՆԵՐԱԾԻՉ (ՍԿԱՆԵՐ) ՉՈՒՆԵՄ, ԿԱՐՈ՞Ղ ԵՄ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼ ԱՄՆ-ՈՒՄ ԻՄ ԾԱՆՈԹՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍԶԻ ՆՐԱՆՔ ՏԵՍԱՆԵՐԱԾԵՆ ԴՐԱՆՔ, ԱՊԱ՝ ԱՅԴ ՖԱՅԼԵՐՈՎ ԴԻՄԿԵՏԸ ՓՈՍՏՈՎ ՈՒՂԱՐԿԵՆ ԻՆՁ:

Այո, դուք կարող եք այդպես վարվել: Կարևորն այն է, որ լուսանկարները համապատասխանեն առաջադրված պահանջներին: Լուսանկարն ու էլեկտրոնային դիմումը ներկայացվում են միաժամանակ: Դիմումը լրացնելիս լուսանկարներով ֆայլերը պետք է արդեն պատրաստ լինեն, որպեսզի կցվեն դիմումին: Լուսանկարներն առանձին ուղարկել չեք կարող: Մի հոգու անունով կարող է լինել միայն մեկ դիմում: Մեկից ավելի դիմումներ լինելու դեպքում, այդ մասնակիցը զրկվում է DV-2014 խաղարկությանը մասնակցելու իրավունքից: Ամբողջական դիմումը լուսանկարների հետ միասին էլեկտրոնային ձևով կարելի է ներկայացնել Միացյալ Նահանգներից, կամ որևէ այլ երկրից:

30. ՕՆԼԱՅՆ/ԱՌՑԱՆՑ ԴԻՄՈՒՄԻ ՄԻ ՄԱՍԸ ԼՐԱՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԿԱՐՈ՞Ղ ԵՄ ԵՍ ԱՅՆ ՀԻՇԵԼ, ԻՍԿ ՄՆԱՑԱԾԸ ԼՐԱՑՆԵԼ ՀԵՏՈ:

Ոչ, չեք կարող: Դիմումի ձևն այնպիսին է, որ այն պետք է միանգամից ամբողջությամբ լրացվի և ուղարկվի: Դիմումը կազմված է երկու մասերից և ցանցային ընդհատումներն ու հապաղումները հաշվի առնելով, համակարգը թույլ է տալիս, որ երկու մասերի ներկայացման միջև մինչև 60 րոպե ժամանակ անցնի: Եթե 60 րոպեից ավել է անցնում, և դիմումը համակարգում չի ստացվում, ապա առաջին մասով ներկայացված ինֆորմացիան համակարգը ջնջում է, որպեսզի հետո ամբողջական ինֆորմացիան չհամարվի այդ կիսատ դիմումի կրկնօրինակը: Այս փաստաթղթում հստակորեն նշված է, թե ինչ տեղեկություններ պետք է ներառվեն DV-2014 դիմումի մեջ և լրացնել սկսելուց առաջ այնպես արեք, որ այդ ամենը լինի Ձեր տրամադրության տակ: Սա կօգնի, որ դուք ամեն ինչ նախապատրաստեք ու արդեն պատրաստի Ձեր ձեռքի տակ ունենաք անհրաժեշտ տեղեկությունները և նոր միայն սկսեք դիմումն առցանց/օնլայն լրացնելը:

31. ԵԹԵ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ՉԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԲՆՈՒԹԱԳՐԻՆ, ԱՊԱ ԳՐՎԱԾ Է, ՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՎՏՈՄԱՏ ԿԵՐՊՈՎ ԿՄԵՐԺԻ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՈՒՄՆ ՈՒ ՈՒՂԱՐԿՈՂԻ ԷԿՐԱՆԻՆ ԿՀԱՅՏՆՎԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՅԴ ՄԱՍԻՆ: ԱՅՍ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈ՞Ղ ԵՄ ԵՍ ԿՐԿԻՆ ՈՒՂԱՐԿԵԼ ԻՄ ԴԻՄՈՒՄԸ:

Այո, կարող եք նոր դիմում ուղարկել: Քանի որ համակարգը ավտոմատ կերպով մերժում է դիմումի ընդունումը, ապա այն համակարգում չի պահվում, դիմումի ստացումը հաստատող ծանուցում չի ուղարկվում: Եթե թվային լուսանկարները չեն համապատասխանում պահանջվող բնութագրերին, ապա դիմումը չի ընդունվում: Իսկ թե ինչքան ժամանակից կստացվի այդ մասին ծանուցումը, կախված է ինտերնետային կապի որակից: Եթե դիմողը կարող է անհրաժեշտ շտկումներ անել ու 60 րոպեի ընթացքում երկրորդ մասը նորից ուղարկել, ապա ամեն ինչ նորմալ կլինի: Հակառակ դեպքում ամեն ինչ պետք է սկսել սկզբից: Դիմում ներկայացնելու համար դիմողը կարող է փորձել այնքան, որքան անհրաժեշտ կլինի, որպեսզի դիմումը հասնի ու այդ մասին հաստատող ծանուցում լինի:

32. ԴԻՄՈՒՄԻ ՍՏԱՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՍՏԱՑՎԵԼՈՒ Է ՀԵՆՑ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՊԱՀԻՆ, ԹԵ՞ ՀԵՏՈ:

Դիմումի ստացումը հաստատող ծանուցումը համակարգն ուղարկում է անմիջապես, սակայն, թե այն երբ կհասնի դիմողին, կախված է ինտերնետային կապի որակից: Եթե "Submit" կոճակը սեղմելուց հետո անցել է որոշակի ժամանակ ու ոչինչ չկա, մի անգամ էլ կարող եք սեղմել այդ կոճակը: Համակարգում դրանից որևէ արտառոց բան չի լինի, քանի որ դիմումի ստացումը հաստատող ծանուցում դեռ չի եղել: Դուք կարող եք փորձել այնքան մինչև դիմումը տեղ հասնի և հայտնվի դիմումի ստացումը հաստատող ծանուցումը: **Իսկ ծանուցումը ստանալուց հետո պետք չէ ձեր տեղեկությունները նորից ուղարկել:**

33. ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆՔ ՀԱՅՏՆԵԼ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԵՂԾԻՔՆԵՐԻ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինտերնետային կեղծիքների մասին Ձեր բողոքը հայտնելու համար կարող եք այցելել Առևտրի դաշնային հանձնաժողովի վարած econsumer.gov կայքը, որը 9 պետությունների սպառողների շահերի պաշտպանության գերատեսչությունների համատեղ կայքն է, հասցեն՝ http://www.econsumer.gov/english/ կամ այցելեք Հետաքննությունների դաշնային բյուրոյի ինտերնետային հանցանքների հաղորդումների կենտրոնի Internet Crime Complaint Center էջը: Իսկ էլեկտրոնային փոստով ստացված հաղորդագրությունների մասին կարող եք հաղորդել Արդարադատության նախարարությանը՝ Department of Justice Contact Us էջին:

34. ԵԹԵ ԵՍ ՍՏԱՆՈՒՄ ԵՄ ՎԻԶԱ ԱՅՍ ԾՐԱԳՐՈՎ, ԱՊԱ ԿՀՈԳԱ ԱՐԴՅՈ՞Ք ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ, ԿՕԳՆԻ ԱՐԴՅՈ՞Ք ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒ ԲՆԱԿԱՐԱՆ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ, ԿԱՊԱՀՈՎԻ ԱՐԴՅՈ՞Ք ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԱՅԼ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ ՀԱՍՏԱՏՎԵՄ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Ոչ, այս ծրագրով վիզա ստացողներին որևէ աջակցություն, ինչպիսին կարող է լինել ճանապարհածախսը հոգալը, բնակարանով ապահովելը, սուբսիդիաներ տրամադրելը, չի նախատեսվում: Եթե շահել եք վիճակախաղում և ներգաղթի վիզայի դիմում եք ներկայացնում, ապա պետք է կարողանաք հավաստիացնել, որ դուք պետության ուսերին բեռ չեք դառնալու, այսինքն կարողանալու եք ինքներդ հոգալ Ձեր կենսապահովման՝ սննդի, բնակարանի ու մյուս ծախսերը: Որպես ապացույց կարող եք ներկայացնել Ձեր ունեցած միջոցները, ԱՄՆ-ում բնակվող ազգականի կամ բարեկամի կողմից Ձեզ աջակցելու մասին պարտավորագիր *(Affidavit of Support*, Ձև 1-134) կամ ամերիկյան գործատուից ստացված աշխատանքային առաջարկ:

ԵՐԿՐՆԵՐ, ՈՐՈՆՑ ԲՆԻԿՆԵՐՆ ԻՐԱՎԱՍՈՒ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ DV-2014 ԾՐԱԳՐԻՆ

Ստորև ըստ մայրցամաքների ներկայացվում են այն երկրները, որոնց բնակիչներն ԻՐԱՎԱՍՈՒ են մասնակցել DV-2014 ծրագրին: Այն երկրները, որոնց բնակիչները չեն կարող մասնակցել DV-2014 ծրագրին, որոշվել են ԱՄՆ քաղաքացիության և ներգաղթի ծառայությունների կողմից ըստ Ներգաղթի և քաղաքացիության մասին օրենքի 203(գ) կետի: Հպատակ տարածքները ներառված են կառավարող երկրի տարածաշրջանի մեջ: Այն երկրները, որոնց բնիկները չեն կարող մասնակցել այս ծրագրին, քանի որ ունեն ներգաղթի բարձր ցուցանիշներ, նշվում են յուրաքանչյուր տարածաշրջանի ցուցակի վերջում:

ԱՖՐԻԿԱ

Անգոլա	Լեսոթո	Նամիբիա
Ալժիր	Լիբերիա	Նիգերիա
Բենին	Լիբիա	Նիգեր
Բոտսվանա	Կամերուն	Չադ
Բուրկինա Ֆասո	Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն	Ջիբութի
Բուրունդի	Կոմորոս	Ռուանդա
Գաբոն	Կոնգո	Սաո Թոմե և Պրինսիպի
Գամբիա	Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն	Սենեգալ
Գանա	Հասարակածային Գվինեա	Սեյշելներ
Գվինեա	Հարավ Աֆրիկյան Հանր.	Սիերա Լեոնե
Գվինեա-Բիսաու	Հարավային Սուդան	Սոմալի
Եգիպտոս	Մադագասկար	Սուդան
Եթովպիա	Մալավի	Սվազիլենդ
Զամբիա	Մալի	Տոգո
Զիմբաբվե	Մավրիտանիա	Ուգանդա
Էրիթրեա	Մավրիտիուս	Փղոսկրի ափ/Կոտ դ'Իվուար
Թանզանիա	Մարոկո	Քեյփ Վերդ
Թունիս	Մոզամբիկ	Քենիա

Գազայի հատվածում ծնված մարդիկ դիտարկվում են որպես Եգիպտոսում ծնվածներ, Վեստ բենքում ծնվածները որպես Հորդանանում ծնվածներ և Գոլան Հեյթսում ծնվածները որպես Սիրիայում ծնվածներ:

ԱՍԻԱ

Աֆղանստան	Իրան	Մալազիա
Բահրեյն	Իրաք	Մալդիվներ
Բհուտան	Իսրայել	Միացյալ Արաբական Էմիրություններ
Բրունեյ	Լաոս	Մոնղոլիա
Բիրմա/Մյանմա	Լիբանան	Նեպալ
Եմեն	Կատար	Շրի Լանկա
Թայլանդ	Կամբոջա	Սաուդյան Արաբիա
Թայվան	Հյուսիսային Կորեա	Սինգապուր
Թիմոր-Լեսթ	Հորդանան	Սիրիա
Ինդոնեզիա	Հոնկոնգի հատուկ վարչական շրջան	Քուվեյթ
	Ճապոնիա	Օման

Հետևյալ ասիական երկրների բնիկները չեն կարող մասնակցել այս տարվա ծրագրին. Բանգլադեշ, Հարավային Կորեա, Հնդկաստան, Չինաստան (մայրցամաքային), Պակիստան, Վիետնամ և Ֆիլիպիններ: Հոնկոնգ հատուկ վարչական շրջանի (Ասիա), Թայվանի (Ասիա) Մակաու հատուկ վարչական շրջանի(Եվրոպա) բնիկները կարող են մասնակցել ու այս տարածքները ներկայացված են ցուցակում:

Մինչև 1967թ. հունիսը Իսրայելի, Հորդանանի և Սիրիայի կողմից վերահսկվող տարածքներում ծնված մարդիկ համապատասխանաբար դիտարկվում են որպես Իսրայելում, Հորդանանում և Սիրիայում ծնվածներ: Գազայի հատվածում ծնված մարդիկ դիտարկվում են որպես Եգիպտոսում ծնվածներ, Վեստ բենքում ծնվածները որպես Հորդանանում ծնվածներ և Գոլան Հեյթսում ծնվածները որպես Սիրիայում ծնվածներ:

ԵՎՐՈՊԱ

Ադրբեջան	Լիխտենշտեյն	Նիդեռլանդներ (հպատակ տարածքները ներառյալ)
Ալբանիա	Լիտվա	Շվեդիա
Անդորրա	Լյուքսեմբուրգ	Շվեյցարիա
Ավստրիա	Խորվաթիա	Չեխիայի Հանրապետություն
Բելգիա	Կիպրոս	Պորտուգալիա (հպատակ տարածքները ներառյալ)
Բելոռուս	Կոսովո	Ռումինիա
Բոսնիա և Հերցոգովինա	Հայաստան	Ռուսաստան
Բուլղարիա	Հյուսիսային Իռլանդիա	Սան Մարինո
Գերմանիա	Հունաստան	Սերբիա
Դանիա (հպատակ տարածքները ներառյալ)	Հունգարիա	Սլովակիա
	Ղազախստան	Սլովենիա
Էստոնիա		
Թուրքիա	Ղրղզստան	Վատիկան
Թուրքմենստան	Մալթա	Վրաստան
Իռլանդիա	Մակաու հատուկ վարչական շրջան	Տաջիկստան
Իսլանդիա	Մակեդոնիա, նախկին	Ուզբեկստան
Իսպանիա	Մոլդովա	Ուկրաինա
Իտալիա	Մոնակո	Ֆինլանդիա
Լատվիա	Մոնտենեգրո (Չեռնոգորիա)	Ֆրանսիա (հպատակ տարածքները ներառյալ)
Լեհաստան	Նորվեգիա	

Հետևյալ եվրոպական երկրների բնիկները **չեն կարող** մասնակցել այս տարվա ծրագրին. Մեծ Բրիտանիա: Մեծ Բրիտանիան (Միացյալ Թագավորությունը) ներառում է նաև հետևյալ հպատակ տարածքները. Անգուիլա, Բերմուդա, Բրիտանական Վիրջինյան կղզիներ, Կայմանյան կղզիներ, Ֆոլկլենդյան կղզիներ, Ջիբլարթար, Մոնսերատ, Պիտկարին, Սենտ Հելենա, Տյորքս և Կայքոսյան կղզիներ: Ծանոթություն՝ միայն այս ծրագրի նպատակներով Հյուսիսային Իռլանդիան դիտարկվում է առանձին: Հյուսիսային Իռլանդիայի բնիկները **կարող են մասնակցել** ծրագրին և այն ներառված է տարածաշրջանի ցուցակում: Մակաու հատուկ վարչական շրջանի(Եվրոպա) բնիկները կարող են մասնակցել ու այս տարածքը ներկայացված է ցուցակում:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Բահամներ

Հյուսիսային Ամերիկայից Կանադայի ու Մեքսիկայի բնիկները չեն կարող մասնակցել այս տարվա ծրագրին:

ՕՎԿԻԱՆԻԱ

Ավստրալիա (հպատակ տարածքները ներառյալ)	Նոր Զելանդիա (հպատակ տարածքները ներառյալ)	Վանուատու
Կիրիբաթի	Պալաու	Տոնգա
Մարշալյան կղզիներ	Պապուա Նոր Գվինեա	Տուվալու
Միկրոնեզիայի Ֆեդերալ Նահանգներ	Սամոա	Ֆիջի
Նաուրու	Սողոմոնյան կղզիներ	

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ, ԿԱՐԻԲՅԱՆ ԱՎԱԶԱՆԻ ԵՐԿՐՆԵՐ

Անտիգուա և Բարբուդա	Դոմինիկա	Սենտ Քիթս և Նեվիս
Արգենտինա	Կոստա Ռիկա	Սենտ Լուսիա
Բարբադոս	Կուբա	Սենտ Վինսենթ և Գրենադիններ
Բելիզ	Հոնդուրաս	Սուրինամ
Բոլիվիա	Նիկարագուա	Վենեսուելա
Գրենադա	Չիլի	Տրինիդադ և Տոբագո
Գվատեմալա	Պանամա	Ուրուգվայ
Գվիյանա	Պարագվայ	

Այս տարածաշրջանից այս տարվա ծրագրին մասնակցել **չեն կարող** հետևյալ երկրների բնիկները. Բրազիլիա, Դոմինիկյան Հանրապետություն, , Էկվադոր, Էլ Սալվադոր, Կոլումբիա, Հաիթի, Մեքսիկա, Պերու և Ջամայկա: